

Բրիգիտա Շիլինա,

Բանասիրական գիտությունների դոկտոր
Ռիգա, Լատվիա

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԼԻՆԵԼ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Երկլեզու կրթությունը բազմալեզու կրթության առաջին աստիճանն է: Երկլեզվության միջոցով տրվում է լեզվական ներուժի կիրառության բազմապիսի հնարավորություն անձնավորության ամենօրյա կյանքում, միջանձնային և սոցիալական ակտիվությունների ժամանակ:

Երկլեզվության բազմակողմանի էության պատճառով, նրա ներկայացված ձևերն անհամաչափ են, ի տարբերություն վաղ հայացքների, երբ երկլեզվությունն ինքնընստինքյան համարվում էր երկու լեզվով կառավարման համաչափ կամ համաչափին մոտեցած ձև:

Ընդհանրապես երկլեզվության անհամաչափության ճանաչումը և գիտակցումը նշանակալի է երկլեզվու կրթության մեջ: Անհամաչափ երկլեզվության տրամաբանական ազդեցությունը մեթոդաբանության և ուսումնական պլանի վրա առաջացրել է այսպես կոչված մոդուլային ուսուցման և ուսուցման տարբեր ոճերի իրականացում, որի միջոցով հնարավոր է անհատական անհրաժեշտությունների վրա ուշադրության կենտրոնացում և կոնկրետ ուսումնական գործընթացի մեջ հարմարում:

Երկլեզու կրթության մեթոդաբանական, մանկավարժական և հոգեբանական ասպեկտները տալիս են բազմապիսի հետազոտությունների, հայտնագործությունների և նորարարությունների հնարավորություն: Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցումը, գիտելիքը և լեզվի ինտեգրված ուսուցումը, ուսումնական գործընթացի մեջ ինտերակտիվության և կրեատիվության ընդգրկումը այդ ցանկում միայն նվազագույնն է:

Երկլեզվություն՝ դեպի բազմալեզվության արված առաջին քայլ: Սոցիալական հարաբերությունների և ինկլյուզիվ ռազմավարությունների տեսանկյունից, երկլեզվությունն անհրաժեշտ է բոլորին: Մարդկության համարյա 2/3-ը երկլեզու է, եռալեզու կամ բազմալեզու: Այսպիսով, տվյալ կարողությունը ոչ թե բացառություն է, այլ կանոն: Տվյալ

համատեքստում միալեզվությունը մեկուսացման, սեգրեգացիայի և հասարակությունից դուրս մղելու արդյունքն է, ինչը հանդիսանում է տնտեսապես և սոցիալապես ոչ արդյունավետ երևույթ:

Տասնամյակներ անհրաժեշտ եղավ մանկավարժներին և հասարակությանը նրա ապացուցման համար, որ արժեքավոր է լեզվական իրազեկությունը մեկից ավելի

լեզուներից և վտանգ չի հանդիսանում հոգեկան, մտավոր և մանկավարժական նվաճումների համար: Եվրոպայում բազմալեզվությունը կարևորագույն անկյանաքարն է եվրոպական նույնականության կառուցման գործընթացում և նախապայմանն է պայմանագրերում ներկայացված ազատության և իրավունքի մասին կազմած փաստաթղթերի իրականացման: Նրանց թվում նշանակալի է ազատ տեղաշարժման և փոխադրման իրավունքը: Եթե Եվրամիության տարբեր երկրների քաղաքացիները միալեզու լինեն, այդ դեպքում այս հիմնարար իրավունքի իրականացումը միայն վիրտուալ ծանրաբեռնում կունենա: Այսպիսով երկ/բազմալեզվությունը օգտակար է անհատական մակարդակում, երկրի, ժողովրդի և հասարակության համար: Այսօրվա դրությամբ միանշանակ կարող ենք ասել, որ «լեզվի էկոնոմիկայի լայն տարածումը մատնանշում է, որ լեզվաբանական կրթության մեջ արված ներդրումը, լեզվական իրազեկության զարգացումը անչափ օգտակար է տնտեսական տեսակետից»:

Մինևույն ժամանակ, «լեզվի էկոնոմիկան» ամբիվալենտ հասկացություն է: Լեզվաբանական կրթության մասին դատողություն անելիս, նշանակալի է ծախսերի արդյունավետության և ստացած օգտավետության գիտակցումը: Եթե լեզվաբանական կրթության վերջնական նպատակը միայն ծախսերի արդյունավետությունը լինի, երկու կամ երեք աշխարհի «մեծ լեզու» համարված է ամենից «շահութաբեր արժեք» տնտեսական շուկայի տեսանկյունից: Զսահմանափակված շուկայում գերազանցում է լեզվի պլանավորման և լեզվական քաղաքականության տնտեսական մոտեցումը, ինչը նպաստում է «լեզվաբանական իմպերիալիզմի»

ձևավորմանը, այս գործընթացը կարող է կործանիչ լինել այլ փոքր լեզուների համար, թեպետ այսպիսի փոքր լեզուները ոչ պակաս կարևոր են լեզվական բազմերանգության տեսակետից, ինչը հանդիսանում է մարդկության հարստությունը:

Եվրամիության լեզվական գաղափարախոսությունը պարտավորված է ճանաչել յուրաքանչյուր անդամ երկրի լեզվական իրավունքը: Հենց սա է լեզվի ուսուցմանը նպաստելու տրամաբանական հիմքը ողջ Եվրոպայում, որի միջոցով եվրոպացիները կոչված են բացի մայրենի լեզվից սովորելու առնվազն 2 եվրոպական լեզու: Այս փաստը հզոր ազդակ է ստեղծում լեզվական զարգացման համար՝ տեսության և փորձի տեսակետից: Նույնը կարելի է ասել նաև համաշխարհային մասշտաբով:

Վերջին ժամանակների հետազոտություններում և ակադեմիական աշխատություններում ապացուցված է, որ երկ/բազմալեզվության միջոցով է նվաճվում ինտելեկտուալ զարգացումը, աճում կրեատիվությունը ամենօրյա ակտիվություններում: Լեզվաբանական կարողությունները նշանակում են լայն հնարավորություններ ցանկացած անհատի համար, և սա ճշմարտություն է: Երկլեզու կարողությունների զարգացումը և բազմալեզու գիտակցությունը բարելավում է ստեղծագործական ներուժը և անձնավորության զարգացումը, ընդլայնում աշխարհայացքը, տիեզերքի մասին պատկերացումը, այն դրական է արտացոլվում անհատի ցանկացած ակտիվության վրա: Այդ պատճառով երկլեզվության արդյունավետությունը չի արտացոլվում միայն լեզվի տարածման շրջանում: Առանձնապես մտածողության հմտության զարգացումը և տարբեր գործընթացներին ակտիվ կերպով ընդգրկման կարողության ձևավորումը լրացուցիչ նշանակություն շնորհեցին երկրորդ լեզվի ուսուցման/ուսանման

գործընթացին, ինչի պատճառով էլ խրախուսված է երկրորդ լեզվի ուսուցման արդյունավետ մեթոդաբանության ստեղծումը, կրթված և ժամանակակից մեթոդաբանությանը համապատասխանեցված մանկավարժների և ուսուցիչների պատրաստումը, երկլեզու համալսարանական ծրագրերի պատրաստումը և երկլեզու հետազոտությունների իրականացումը: Տվյալ հարցերի վրա աշխատանքները Լատվիան, Վրաստանի պես, գրոյից սկսեց: Այսօր, տասնյակ տարիներ անց, մենք կարող ենք գնահատել ստացված արդյունքները և քննարկել հետագա գործունեության պլանները: Մենք ի մի ենք բերել օգտակար փորձը, որը համեմատության, գնահատման և հարմարեցման կարիք ունի՝ անհրաժեշտության դեպքում:

Իրականության, և ոչ թե ուսումնական թեստին կողմնորոշված, ուսանում

Եվրամիությունում երկլեզու կրթությունից վերջին տասնամյակում կուտակված փորձն ուսուցիչներին, կրթության մասնագետներին և լեզվական գաղափարախոսություն ստեղծողներին հնարավորություն տվեց անել եզրակացություն, որ լեզվաբանական իրազեկության նվաճումն անհնար է միայն լեզվի դասերի միջոցով:

Ուսումնական պլան կազմելիս՝ պոտք է իմանալ, որ կարևորն այն է, որ այն կարողանա արագ հարմարվել զարգացող կրթական տարածքում: Կրթության տվյալ բնագավառը երբեք չի եղել այսպես ժողովրդականություն վայելող և սովորողների բազմերանգությամբ աչքի ընկնող, որտեղ ներկայացված են նախադպրոցական տարիքից սկսված բոլոր տարիքի անհատներ: Այստեղ իսկապես տեսնում ենք այսպես կոչված ուսանում ողջ կյանքի ընթացքում, և այս ուղղությունն ամբողջությամբ մարտահրավեր է

կրթության բնագավառում ընդգրկված մարդկանց համար, մասնավորապես ուսուցիչների և լեզու սովորողների համար: Մեծահասակների մասին գոյություն ունի մի այսպիսի նախապաշարմունք, ինչն արտահայտվում է նրանց լեզվական ներուժի մեջ կասկածելու մեջ: Առանձնապես քաղաքական մակարդակում, հաճախ շեշտադրվում է, որ որոշակի տարիքից հետո լեզու սովորելը բարդանում է: Տվյալ տեսակետը, կապված լեզու սովորելիս սահմանափակ տարիքի հետ, հակասում է անձնավորության ազատ զարգացման հիմնարար իրավունքին: Տարիքայի շեմի հետ կապված նախապաշարմունքը գուրկ է հիմքից և կատարում է լեզվի ուսանման բնագավառի դիտավորյալ մոլորեցում և ինքնըստինքյան սահմանափակում է առողջ մարդուն զարգացնող կարողությունները: Կրթության մասնագետները լավ գիտեն, որ յուրաքանչյուր տարիքային խումբ ունի համապատասխան հնարավորություններ և հնարավոր ուղիներ նրա համար, որ նվաճվեն ցանկալի արդյունքները: Մեծահասակների դեպքում լեզու սովորելու անհրաժեշտությունը կայանում է պրակտիկության և արագության մեջ, այդ պատճառով այսպիսի դեպքում ուղիներից մեկը հանդիսանում է մոդուլներով ուսուցումը, փոքրիկ, հարմարեցված ծրագրերի տեսքով, որը համապատասխանում է լեզու սովորողների կոնկրետ անհրաժեշտություններին: Մոդուլներին կողմնորոշված ուսուցումն ունի բազմաթիվ առավելություններ, թեպետ ունի նաև որոշակի սահմանափակումներ:

Մոդուլների առավելության մասին՝ մոդուլները հիմնված են շատ կոնկրետ և ազգակից հարցերի, գործառույթների կամ վերաբերմունքների վրա, երբ նրա ծրագիրը պատրաստվի, այն հնարավոր կլինի կիրառել համակարգչային ծրագրերով: Համակարգչային տեխնոլոգիաների միջոցով մոդուլի կիրառումը հնարավոր է միավորված

ուսուցման ժամանակ, երբ հստակ ձևակերպված են նպատակները: Միավորված ուսուցումը, որ հիմնվում է ուսումնական ակտիվությունների վրա, այլ դրական արդյունքներ է տալիս, մասնավորապես, ավելի լավն է ինտերակցիան, ակտիվ է հարց-պատասխանի ռեժիմը, գնահատումը և ընդհանուր վերահսկումն ամբողջությամբ սովորողների միասնության մեջ: Լեզու սովորելու ժամանակ մեծահասակը կառավարում է ուսանման գործընթացը և աշխատում է լավ վարպետանալ տվյալ մոդուլի շրջանակներում, նաև մշակել հաղորդակցական կարողություններ, որ անհրաժեշտ են նրան տվյալ համատեքստում: Այդ թվում, մոդուլի վրա հիմնված ուսանման ժամանակ հրահանգիչը և նյութեր ստեղծողը պետք է որոշեն հիմնական բանաձևերը և հարցերը, որոնք հնարավոր կլինի ընդհանրացնել նաև մոդուլի սահմաններից դուրս, այսինքն՝ ընդհանուր հարցերը: Մեծահասակների կրթության համար համապատասխան ռազմավարությունները և հարուստ նյութերը ի մի են բերված «Ուսանում ողջ կյանքի ընթացքում» ծրագրի շրջանակներում: Նրանում միավորված են **ինքնուսուցումը** և **խմբի վրա հիմնված ուսուցումը**: Նման ուսուցման ռճի մասին փորձը նկարագրված է Կոնվեյի, Ջոնսոնի և Ռիպլիի մոտ: (Stetep` Integration of Team-Based Learning Strategies Into a Cardiovascular Module, 2010-American Association of Colleges of Pharmacy: In: Am J Pharm Educ. 2010 March 10; 74(2): 35). Ուշագրավ է, որ տվյալ ռազմավարության գնահատումն ընդգրկում է հետևյալ դրույթը. «Ուսանողների և պրոֆեսորների գոհունակության մակարդակը բարձրացավ SDL բաշխումից և TBL քեյսերի (օրինակների) ավելացումից հետո, այնպես, որ գնահատականի վրա բացասական ազդեցություն չի գործել և դասախոսային ժամանակի 14%-ով նվազեցումը նախորդող գործընթաց է եղել: Լրիվ ֆակուլտետային

ժամանակն ավել է անհրաժեշտ առաջին տարվա սկզբնական փուլից՝ կուրսի նյութերի մշակման անհրաժեշտության պատճառով»:

Ուսուցման ակտիվ ռազմավարությունների յուրացումը և հզորացումը կողմնորոշված է սոցիալական և մասնագիտական ակտիվության աճին, ինչը հետագայում առաջացնում է ինքնավստահություն և սեփական անձի ավելի լավ ճանաչում: Լարի Միխելսենը կազմում է խմբի վրա հիմնված ուսուցման հայեցակարգ: Տարբեր առավելությունների հետ մեկտեղ նա հայտարարում է. «Հենց որ ուսանողները միմյանց վստահություն ձեռք բերեն և կազմեն միասնական պլան, որը օգտակար կլինի իրենց խմբի համար, նրանք կվերածվեն մեկ թիմի: Երբ նրանք կվերածվեն միավորված թիմի, այսպիսի թիմը կարող է անել ավելին, քան առանձին անհատը կամ նոր ստեղծած խումբը» (*intekp` in Professional Development Module on Active Learning by Diane Starke, El Paso Community College, website Texas Collaborative for Teaching Excellence, May14, 2011, <<http://www.texascollaborative.org/activelearning.htm>>*);

Հետևողականությունը և ժամանակի գործոնը հանդիսանում են մոդուլի վրա հիմնված ուսուցման ևս մեկ առավելությունը, քանի որ այն տալիս է գործառույթների ժամանակային և արագության տեսակետից անհատականացման հնարավորություն: Հնարավոր է այն հեշտությամբ հարմարեցնել և համապատասխանեցնել կոնկրետ իրավիճակներին:

Տվյալ առավելությունների թվարկումը մեզ հեռու կտանի, քանի որ նրանք ներկայացված են բազմակողմանիորեն: Չնայած դրան՝ կարևոր է որ ամբողջությամբ գիտակցենք և չանտեսենք այն գործոնները, որոնք կարող են ընդհանրապես զրոյի մակարդակի իջեցնել և անհաջող դարձնել ուսումնական գործընթացի արդյունքները:

Երկլեզու կրթության մեջ ենթադրվում է երկու ուղղությամբ ուսումնական ակտիվություն՝ իմաստային դասընթացի վարում և լեզվական դասընթացի վարում: Լավագույն արդյունքների հասնելու համար նշանակալի է, որ այս երկու դասընթացները/ուղղությունները զգուշությամբ համակարգվեն և կառուցվածքային տեսակետից մշակվեն: Դասընթացի ստեղծողներից և ուսուցիչներից պահանջվում է երկու ուղղությունների հավասար զարգացում: Իդեալական դեպքում, ուսումնական գործընթացի և նաև նյութերի ստեղծման ժամանակ ցանկալի է, որ ընդգրկվի ուսուցիչների թիմ՝ առնվազն երկու անդամից: Այդ թվում, առարկայի ուսուցիչ, որը պատասխանատու է իմաստային կողմի համար և մեթոդիստ-փորձագետ երկլեզու կրթության ուղղությամբ:

Ուսուցիչների համար էական խնդիր է հանդիսանում նյութերի կազմումը, մոդուլի ստեղծումը, ակտիվությունների և դասընթացի ստեղծումը: Այս գործընթացներում կարևոր է իմաստային և լեզվական ասպեկտների նախատեսումը, քանի որ յուրաքանչյուր ասպեկտին մեծ նշանակություն է շնորհվում: Կարևոր է ուսումնական գործընթացի մեթոդաբանորեն և լեզվական գործիքներով լրացուցիչ ապահովումը:

Առարկայի ուսուցիչները երբեմն համարում են, որ բառարանները և բառերի ցանկը ամենակարևոր հենարանն են երկլեզու կրթության մեջ: Ինքնըստիստիքյան պարզ է, որ կարևոր է տվյալ նյութերի կիրառումը, թեպետ դրանք չեն կարող երկլեզու կրթության սպառիչ նյութական և մեթոդաբանական ապահովում իրականացնել: Որպես օժանդակ միջոցներ կարող ենք օգտագործել ուղեցույցեր, քարտեզներ, գծապատկերներ, հարցումներ, հարցազրույցներ, աղյուսակներ, հարցարաններ, տեսանյութեր, տվյալների

բազաներ և այլն: Թվարկումը փաստորեն անսահման է, քանի որ այն ընդգրկում է իրական կյանքի ասպեկտները, որպես ռեսուրս լեզվաբանական տեսակետից:

Միևնույն ժամանակ նյութերը ստեղծողները և ուսումնական գործընթացի ղեկավարները երկլեզու կրթության մեջ աշխատում են բարձրացնել և ամրապնդել լեզու սովորողի լայն հնարավորությունները, ինչը նրանց կօգնի իրական կյանքում:

Մոդուլներ ստեղծողների համար դժվարություններ է ստեղծում տարբեր մոդուլների միջև կապի կորցնելը: Մոդուլն ինքըստիստիքյան հանդիսանում է մեծ միության փոքր մաս: Գոյություն ունեն որոշակի ուղիներ տվյալ ռիսկերից խուսափելու համար: Հնարավոր ուղիների միջև անչափ կարևոր է չընդհատվող կապը լեզու սովորողի և հրահանգչի միջև, որը հնարավոր է լինի հարց-պատասխանի ձևաչափում և առավելապես բնական և կենսական միջավայրում: Սա լավ ռեսուրս է սովորողի համար:

Ընդհանրապես, լեզու սովորելու ժամանակ և նաև երկլեզու կրթություն կազմակերպելիս, տարբեր գործոնների հետ մեկտեղ վճռական նշանակություն ունի այն փաստի գիտակցումը, որ լեզվի իմացությունը տեսական մակարդակում (նկատի ունենք քերականական կազմակերպվածությունը) տարբերվում է լեզվի իրական կյանքում, կոնկրետ իրավիճակում կիրառելու հնարավորությունից: Ավելին, գործառական լեզվական անհրաժեշտությունները միշտ չէ որ պահանջում են շատ բարձր լեզվաբանական իրազեկությունների մակարդակ: Այսպիսի դեպքերը հաճախակի են երեխաների մեջ, որոնք կարող են առանց որոշակի լեզվաբանական ձևերի բազմալեզու միջավայրում հեշտությամբ հաղորդակցվել: Այսպիսի իրավիճակում քերականական ձևերից ավելի կարևոր է պատճառաբանվածությունը,

հաղորդակցական ճկունությունը, և որ ամենակարևորն է, մեծ ցանկությունը: Մի խոսքով երկլեզվությանը բնորոշ է հակադրականությունը:

Երկլեզվության համար բավական չէ որոշակի լեզվական կարողությունների ստուգումը թեստի միջոցով և նրա պաշտոնապես գնահատումը: Երկլեզվությունն արտահայտվում է անսահման հրատապացման և երկլեզու իրազեկության կատարելագործման և հարստացման մեջ: Քանի որ, եթե որոշակի լեզվական կարողությունները չեն վարժվում և հրատապացվում, հնարավոր է դրանք կորչեն: Բացի այդ, նշանակալի է, որ երկլեզու իրազեկությունը և կարողությունները փոփոխական են՝ ըստ համապատասխան միջավայրի:

Համապատասխանաբար, ապացուցված ճշմարտություն է, որ երկլեզվությունը երբեք ստատիկ չէ: Այն մշտապես փոփոխվում է, դինամիկ է: Այնպես, ինչպես անհատական երկլեզվության, այնպես էլ որոշակի խմբի կամ հասարակական երկլեզվության մակարդակը տատանվում է: Ցանկացած դեպքում այս տատանումը կարող է լինել համեմատական: Երկլեզու իրազեկության

տատանումը կախված է բազմապիսի համատեքստային գործոններից, որոնք սահմանում են երկլեզվության անհրաժեշտությունը,

պատճառաբանվածության բարձրացումը, նաև լեզվական կարողությունների իրականացման հնարավորությունը: Պատճառաբանվածության դեպքում անհրաժեշտությունը և հնարավորությունը լրացնում են միմյանց, և այս դեպքում չի զգացվում երկլեզվության մակարդակի իջեցում: Այստեղ զգացվում է ոչ միայն անհատական, այլև ամբողջ ազգի և հասարակության զարգացումը:

Երկլեզվությունը շարունակվում է մինչև կյանքի վերջ:

Վերջում ուզում եմ մեջբերել կրթության անձանոթ մասնագետի միտքը. քանի որ կրթությունը դառնում է ավելի և ավելի երկլեզու և բազմալեզու, մենք պետք է նայենք լեզվական համակարգի անհատական ուսուցումից հեռու և լեզուն գիտակցենք որպես ուսուցման միջնորդ, լեզվական հանրայնացումը պատկերացնենք որպես լեզվի և մշակույթի ուսումնասիրում և կողմնորոշումն անենք սոցիալական համատեքստի վրա:

Brigita Šiliņa,

Dr. philol., Riga, Latvia

THE IMPORTANCE OF BEING MULTILINGUAL

ABSTRACT

Globalization has impacts on the language policies throughout the world. Awareness of the multilingual diversity of mankind inaugurates a world-wide recognition of multilingual education as a necessity. Bilingual education, in many respects, is the first stage in multilingual education.

Bilingualism has many facets pertinent to a great variety of potential application of language(s) in a person's everyday private life, interpersonal relations, and social activities, working life, political affiliations, civic performances and international networks.

Due to the multifaceted essence of bilingualism its most typical forms are asymmetrical instead of earlier presumption that bilingualism per se is a symmetrical or nearly symmetrical command of two languages: L1 and L2. Nowadays when bilingualism is a widely spread phenomenon in human intercourse ample evidence testifies to the fact that the scale of variations in the degrees and levels of L2 competences is immense. Therefore it is more precise to say that in the majority of cases bilingualism is asymmetrical.

Recognition of asymmetry in the bilingual practice has important connotations in bilingual education in particular. A logical impact of asymmetrical bilingualism in methodology and curriculum planning has led to the implementation of the so-called modular teaching and learning styles which allow responding to the individual needs and adapting to the requirements of the given learning situation.

Bilingual education is a highly potential kind of education that according to the assessment of many researchers is the most fruitful approach to education in the 21st century.

Methodological, pedagogical and psychological aspects of bilingual education offer wide vistas for research, discoveries and innovations. Content and language integrated learning (CLIL), knowledge and language integrated learning (KLIL), leading to interactivity and creativity in the learning process are but a few of them.